ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << *ՇՀԾՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-17/1.1* >>

ք. Երևան << 07 >> դեկտեմբերի 2016թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ա. Զալինյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Հովսեփյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **18000000 (տասնութ միլիոն)**ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Սույն Պայմանագրի 4.1 կետով նախատեսված գումարի վճարման պարտավորությունները կստանձնվեն համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի վերաբերյալ կկնքվի համաձայնագիր:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.1.1 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները կմատուցվեն համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի վերաբերյալ կկնքվի համաձայնագիր: Պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն, Հ/Հ 900011000834 ՀՎՀՀ 02631263	«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ ք. Երևան, Ն.Տիգրանյան 1 փակուղի 1 «Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ Հ/Հ 217002121630001 ՀՎՀՀ 00131374 էլ. հասցեն՝ sto-karcomauto@rambler.ru Հեռ. (010)249640
------------------------------ (ստորագրություն) Կ.Տ	------------------------------ (ստորագրություն) Կ.Տ

Հավելված 1
<<07>> դեկտեմբերի 2016թ. կնքված
<< ՇՀԾՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-17/1.1 >>ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների

Հ/Հ	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Միավորի գին /ՀՀ դրամ/			
		1 չափաբաժին	2 չափաբաժին	3 չափաբաժին	4 չափաբաժին
		ՎԱԶ 21074, ՎԱԶ 2106 մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ	ՎԱԶ 21214, ՈՒԱԶ 31512 մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ	Տոյոտա Քեմրի, Տոյոտա Կոռոլա, Նիսան Սանի, Նիսան Սենտրա, Հունդաի Սոնատա մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ	Նիսան Իքս Տրայլ, Նիսսան Իքս Տերրա, ԿԻԱ Սեռատո ա/մ մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ
1	2	3	4	5	6
	SU-1 ներառվող ծառայությունների անվանում				
1	Բռնկման համակարգի ստուգում	5000	5000	5000	5000
2	Սառեցման համակարգի ստուգում	3000	3000	5000	5000
3	Յուղման համակարգի ստուգում	0	0	0	0
4	Արտացման համակարգի ստուգում	0	0	0	0
5	Կցորդման համակարգի ստուգում	0	0	0	0
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0	0	0	0
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում			0	0
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0	0	0	0
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0	0	0	0
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0	0	0	0
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	5000	5000	5000	5000
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	3000	3000	5000	5000
13	ABS համակարգի ստուգում			0	0
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0	0
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0	0
16	Թափքի վիճակի ստուգում	0	0	0	0
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	1000	1000	1000	1000
18	Շարժիչի հանում և տեղադրում	15000	18000	60000	60000
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում			0	0
20	Նույնը կոնդիցիոների դեպքում			0	0
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում			0	0
22	Շարժիչի վերանորոգում	45000	45000	50000	50000
23	Նույնը DOHC դեպքում			0	0
24	Նույնը V6-ի դեպքում			0	0
25	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	1500	5000	6000	7000
26	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000

27	Նույնը աջի համար (V6)			0	0
28	Նույնը ձախի համար (V6)			0	0
29	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	10000	10000	40000	40000
30	Նույնը աջի համար (V6)			0	0
31	Նույնը ձախի համար (V6)			0	0
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	100	100	100	100
33	Շարժիչի գլխիկի վերանորոգում	15000	15000	25000	25000
34	Փականի խցուկի փոխարինում	500	500	1000	1000
35	Նույնը V6-ի դեպքում			0	0
36	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	500	500	500	500
37	Նույնը V6-ի ձախի դեպքում			0	0
38	Նույնը V6-ի աջի դեպքում			0	0
39	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0
40	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում			500	500
41	Հրիչների փոխարինում SOHC	500	500	500	500
42	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0
43	Ատամնավոր փոկի փոխարինում	0	3000	0	3000
44	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0
45	Նույնը V6-ի դեպքում			0	0
46	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	1000	1000	1000	1000
47	Նույնը կոնդիցիոների դեպքում			0	0
48	Նույնը DOHC դեպքում			0	0
49	Նույնը կոնդիցիոների դեպքում			0	0
50	Նույնը V6-ի դեպքում			0	0
51	Նույնը կոնդիցիոների դեպքում			0	0
52	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	1000	1000	1000	1000
53	Նույնը ԱՓՏ-ի դեպքում			0	0
54	Մխոցային օղակների փոխարինում	1000	1000	1000	1000
55	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0
56	Նույնը V6-ի դեպքում			0	0
57	Թափանիվի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ				
58	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	1500	1500	3000	3000
59	Յուղի պոմպի փոխարինում	1000	1000	1000	1000
60	Նույնը DOHC դեպքում			0	0
61	Նույնը V6-ի դեպքում			0	0
62	Ղեկավարման բլոկի վերանորոգում	5000	5000	15000	15000
63	Բռնկման կարգավորում	100	100	100	100
64	CO կարգավորում	500	500	500	500
65	խարիսարակի հանում և տեղադրում	2000	2500	0	3000
66	Խարիսարակի վերանորոգում	3000	3000	0	3000
67	Օդի զտիչի փոխարինում	1000	2000	2000	2000
68	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	8000	9000	10000	10000
69	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	8000	9000	15000	15000
70	Բենզամղիչի փոխարինում	5000	8000	8000	8000
71	Վառելիքի զտիչի փոխարինում	1500	1500	1500	1500
72	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	500	500	500	500
73	Տրամլյորի հանում և տեղադրում	100	100	0	0
74	Տրամլյորի վերանորոգում	100	100	0	0
	3. Սառեցման և արտածման համակարգ				
75	Հովհարի փոկի հանում և տեղադրում	1000	5000	3000	3000
76	Հովհարի հանում և տեղադրում	3000	5000	5000	5000
77	Ռադիատորի հանում և տեղադրում	3000	8000	10000	10000
78	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0
79	Նույնը ԱՓՏ-ի դեպքում			0	0
80	Ռադիատորի վերանորոգում	2000	2000	2000	2000

81	Թերմոստատի փոխարինում	3000	3000	15000	10000
82	Ջրի պոմպի փոխարինում	5000	10000	20000	20000
83	Նույնը DOHC և V-6 դեպքում			0	0
84	Նույնը կոնդիցիոների դեպքում			0	0
85	Ջրի պոմպի վերանորոգում	100	100	100	100
86	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0
87	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0
88	Ընդարձակող բաքի փոխարինում	1000	1500	3000	3000
89	Խլարարի հանում և տեղադրում	3000	3000	5000	5000
90	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0
91	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	1500	1500	2000	2000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ				
92	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	2000	3000	3000	3000
93	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	1000	1000	100	100
94	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	1000	1000	1000	1000
95	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000
96	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում			4000	4000
97	ՓՏ-ի հանում և տեղադրում	10000	35000	36000	36000
98	ՓՏ-ի վերանորոգում	10000	35000	35000	35000
99	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	100	100	100	100
100	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	100	100	100	100
101	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	100	100	100	100
102	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում			1000	1000
103	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում			1000	1000
104	Նույնը V6-ի համար			0	0
105	ԱՓՏ-ի հանում և տեղադրում			5000	5000
106	Նույնը V6-ի համար			0	0
107	ԱՓՏ-ի վերանորոգում			1000	1000
108	Նույնը V6-ի համար			0	0
109	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում			12000	12000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ				
110	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում		500	0	500
111	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով		15000	0	1000
112	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում		500	0	500
113	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	2000	2000	0	10000
114	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	100	100	0	100
115	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	2000	2000	0	3000
116	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	2000	2000	0	3000
	6. Առջևի և հետևի կամրջակներ				
117	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	15000	25000	0	30000
118	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	1000	1000	0	500
119	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	20000	20000	0	25000
120	Առջևի կամ հետևի կամրջ. կիսասռնու հանում և տեղադր.	2000	3000	0	10000
121	Կիսասռնու առանցքակալի փոխարինում	1500	3000	0	2000
	7. Կախոց				
122	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	100	100	100	100
123	Տրավերսի հանում և տեղադրում	8000	15000	35000	35000
124	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում		12000	12000	10000
125	Անվակունդի առանցքակալի փոխարինում	4000	5000	10000	10000
126	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	0	0	0	0
127	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում		100	100	100
128	Նույնը հետին տանող ա/մ-երի համար				0

129	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում		100	100	100
130	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	0	100	100	100
131	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	0	0	1000	1000
132	Զսպանակի հանում և տեղադրում	1000	5000	2000	5000
133	Զսպակի հանում և տեղադրում		5000		5000
134	Զսպակի վռանների փոխարինում		5000		5000
135	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	2000	1500	10000	10000
136	Ներքևի լծակի հանում և տեղադրում	3000	3000	10000	10000
137	Ներքևի լծակի վռանների փոխարինում	1000	3000	5000	5000
138	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	2000	2000	5000	5000
139	Միջին ձգանի հանում և տեղադրում	3000	2000	5000	5000
140	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	2000	1500	100	1000
141	Վերևի լծակի հանում և տեղադրում	3000	2000	2000	2000
142	Վերևի լծակի վռանների փոխարինում	1000	2000	2000	200
143	Գնդի հոդակապերի փոխարինում	2000	1000	6000	6000
144	Ծայրակաների հանում և տեղադրում	1000	1500	2000	2000
145	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	2500	4000	4000	4000
146	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	1000	3000	3000	3000
147	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	1000	1000	1000	1000
148	Հետևի զսպանակի փոխարինում	1000	1000	1000	1000
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	2000	2000	5000	5000
150	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	1000	1000	5000	5000
151	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	100	100	100	500
152	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	0	1000	3000	3000
153	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում			5000	5000
154	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում			2000	2000
155	Անվաբացքի կարագավորում	6000	8000	12000	12000
156	Զորման աշխատանքներ 1 քառ.սմ համար	1000	1000	1000	1000
	8. Ղեկային մեխանիզմ				
157	Ղեկային կալունի հանում և տեղադրում	6000	8000	1000	1000
158	Նույնը V6-ի համար			0	0
159	Ղեկային կալունի վերանորոգում	4000	8500	1000	1000
160	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	1000	500	1000	1000
161	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	500	500	500	500
162	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում			500	500
163	Նույնը DOHC դեպքում			0	0
164	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում			100	100
165	Նույնը DOHC դեպքում			0	0
166	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում			3000	3000
167	Նույնը DOHC դեպքում			0	0
168	Նույնը կոնդիցիոների դեպքում			0	0
169	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում			25000	25000
170	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում			40000	40000
	9. Արգելակային համակարգ				
171	Գլխ. գլանի հանում և տեղադրում	3000	3500	5000	5000
172	Գլխ. գլանի վերանորոգում	2000	1000	1000	1000
173	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	6000	8000	20000	20000
174	Բանվ. գլանի հանում և տեղադրում	3000	3500	2000	2000
175	Բանվ. գլանի վերանորոգում	1000	1000	2000	3000
176	Արգելակային համակարգի օդահանում	2000	1500	5000	5000
177	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	1500	2000	5000	5000
178	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում			5000	5000

179	Առջևի սուպպորտի վերանորոգում	1000	1000	1000	1000
180	Հետևի սուպպորտի վերանորոգում			3000	3000
181	Արգելակային փողրակի փոխարինում	2000	2000	5000	5000
182	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	2000	6000	5000	5000
183	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում			5000	5000
184	Հետևի կոճղակների փոխարինում	3000	6000	6000	6000
185	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	3000	2500	6000	6000
186	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	0	0	5000	5000
187	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000
188	ABS-ի հանում և տեղադրում			1000	1000
189	ABS-ի վերանորոգում			1000	1000
190	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	4000	4000	4000	4000
191	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	100	100	100	100
	10. Էլեկտրասարքավորում				
192	Էլեկտրասարքավորման վերանորոգում	1000	1000	1000	1000
193	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	10000	10000	10000	10000
194	Գեներատորի հանում և տեղադրում	3000	3000	10000	10000
195	Նույնը V6-ի դեպքում			0	0
196	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	0	0	0	0
197	Գեներատորի վերանորոգում	5000	5000	18000	18000
198	Մեկնարկիչի հանում և տեղադրում	3000	3000	10000	10000
199	Մեկնարկիչի վերանորոգում	5000	5000	12000	12000
200	Առջևի լապտերի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000
201	Հետևի լապտերի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000
202	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	3000	5000	8000	8000
203	Վազքաչափի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000
204	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	1000	4000	100	100
205	Սաքերի պանելի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000
206	Արագաչափի հանում և տեղադրում	500	500	500	500
207	Ազդանշանի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000
208	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	4000	6000	8000	8000
209	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	500	5000	5000	5000
210	Ազդանշանային համակարգի տեղադրում	10000	10000	10000	10000
211	Մագնիտոլայի տեղադրում	5000	5000	5000	5000
212	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000
213	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	5000	5000	15000	15000
214	Էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000
215	Էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000
216	Էլեկտրական տվիչների փոխարինում	1500	1500	3000	3000
217	Էլեկտրական անջատիչների փոխարինում	1500	1500	3000	3000
218	Վառոցքի մոմերի փոխարինում	1000	2000	3000	3000
219	Կոնդիցիոների լիցքավորում	0	0	18000	18000
220	Կոնդիցիոների վերանորոգում	0	0	1000	1000
	11. Այլ ծառայություններ				
221	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար	3000	3000	3000	3000
222	Ավտոմեքենայի լվացում	3000	3000	3000	3000
223	Անիվի հանում և տեղադրում	500	500	1000	1000
224	Անվադողի վերանորոգում	1000	1000	1000	1000
225	Անիվի բալանսավորում	1000	1000	1000	1000
226	Անիվի վալց	500	500	500	500
227	CO-զոդման աշխատանքներ, *գին 1 քառ.սմ - ի համար*	1000	1000	1000	1000
228	Խառատային աշխատանքներ	1000	1000	1000	1000

229	Փականագործի աշխատանքներ	1000	1000	1000	1000
230	Քարշարկի ծառայություն *գին 1կմ, համար*	500	500	500	500
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	ՎԱԶ 21074, ՎԱԶ 2106 մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ	ՎԱԶ 21214, ՈՒԱԶ 31512 մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ	Տոյոտա Քեմրի, Տոյոտա Կոռոլա, Նիսան Սանի, Նիսան Սենտրա, Հունդաի Սոնատա մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ	Նիսան Իքս Տրայլ, Նիսսան Իքս Տերրա, ԿԻԱ Սեռատո ա/մ մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ
	1.Շարժիչ				
1.1	Շարժիչի բլոկ	1000	1000	1000	1000
2.1	Շարժիչի գլխիկ	1000	1000	1000	1000
3.1	Բարձիկ	4800	5000	40000	40000
4.1	Շարժիչի գլխիկի միջադիր	2400	3000	5000	5000
5.1	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	6000	6000	60000	60000
6.1	Շարժիչի բաշխիչ լիսեռ	30000	38000	40000	40000
7.1	Շարժիչի փական դուրս մղող	3000	3000	8000	8000
8.1	Շարժիչի փական ներս մղող	3000	3000	8000	8000
9.1	Շարժիչի փականի խցուկ	600	600	1000	1000
10.1	Ծնկաձև լիսեռ	1000	1000	1000	1000
11.1	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	600	1000	6000	6000
12.1	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	1200	1500	6000	6000
13.1	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	4000	4000	8000	8000
14.1	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	4000	4000	8000	8000
15.1	Հենակային տափողակ	1200	1200	5000	5000
16.1	Մխոց	7000	7000	15000	15000
17.1	Մխոցային օղակներ	6000	10000	20000	20000
18.1	Ատամնանիվ	2000	2000	5000	5000
19.1	Ատամնավոր փոկ	0	2500	0	10000
20.1	Շղթա	6000	6000	20000	20000
21.1	Հիդրոծգան	0	5000	15000	15000
22.1	Հրիչ	2000	2000	1000	1000
23.1	Հիդրոհրիչ	0	7000	10000	10000
24.1	Բաշմակ	2000	3500	6000	6000
25.1	Հանգստարար	1200	2400	6000	6000
26.1	Թափանիվ	1000	1000	1000	1000
27.1	Թափանիվի պսակ	10000	10000	10000	10000
28.1	Խցուկ բաշխիչ լիսեռի	0	2000	0	1000
29.1	Շկիվ	9600	9000	10000	10000
30.1	Շարժաթև	9600	9000	10000	10000
31.1	Կարտերի միջադիր	2400	2000	4000	4000
32.1	Միջադիր	2400	2500	20000	20000
	2.Ղեկավարման, սմման և յուղման համակարգ				
33.1	Յուղ շարժիչի հանքային, *1 լիտր*	3600	3600	3600	3600
34.1	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, *1 լիտր*	4800	4800	4800	4800
35.1	Յուղ շարժիչի սինթետիկ, *1 լիտր*	6000	6000	6000	6000
36.1	Յուղի զտիչ	2400	2000	6000	8000
37.1	Յուղի պոմպ	5000	5000	5000	5000
38.1	Յուղի պոմպի շարժաբեր	100	100	100	100
39.1	Յուղի ռադիատոր	100	100	100	100
40.1	Յուղի փողրակ	100	2000	5000	5000
41.1	Յուղի ծորակ	100	2000	2400	2400